Հավելված
ՀՀ կառավարության 2019 թվականի
ապրիլի 25-ի N 560 - Լ որոշման

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| | Առաջարկվող միջոցառումը | Նպատակը | Պատասխանատու մարմինը | Կատարման ժամկետը | Միջոցառման իրականացման համար պահանջվող գումարի աղբյուրը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. Ընկերությունների հիմնում | | | | | |
| 1) | Իրավաբանական անձանց պետական գրանցման (այդ թվում՝ նաև ոչ տիպային կանոնադրության հիման վրա) գործընթացի, ինչպես նաև կանոնադրության ցանկացած փոփոխության էլեկտրոնային եղանակով իրականացման հնարավորության ստեղծում | իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացի մատչելիության և հասանելիության ապահովում | ՀՀ արդարադատության նախարարություն | 20.06.2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 2) | Հարկային, վարձու աշխատողների, անշարժ գույքի կադաստրի, պետական գնումների և գրավի տվյալների բազաների միավորում և (կամ) հասանելիության ապահովում՝ ՀՀ պետական կառավարման մարմինների համար | ընկերությունների գրանցման պետական ռեեստրի կատարելագործում | ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ պետական եկամուտների կոմիտե<br>ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե | 20.06.2019 թ. | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3) | Պետական ծառայությունների մատուցման միասնական գրասենյակների գործառույթների ընդլայնում՝ ներառելով լիցենզիաների և թույլտվությունների ստացման գործընթացները: Համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախաձեռնում | տնտեսավարողների կողմից փաստաթղթերի ներկայացման և ստացման մատչելիության ապահովում և քայլերի կրճատում | ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ պետական կառավարման մարմիններ | 20.06.2019 թ. | |
| 2. Շինարարական թույլտվություններ | | | | | |
| 1) | Ցածր, միջին և միջինից բարձր ռիսկայինության աստիճանի շինությունների համար ավարտական ակտի ստացման գործընթացի պարզեցում և ժամկետների կրճատում | կառուցապատման ընթացակարգերի պարզեցում և ժամկետների կրճատում | ՀՀ քաղաքաշինության կոմիտե<br>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) | 30. 06. 2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 2) | Ցածր, միջին և միջինից բարձր ռիսկայինության աստիճանի շինությունների համար ավարտական ակտի ստացման համար հանձնաժողովի ձևավորման լիազորությունը կառուցապատողից վերապահել ՏԻՄ-ին | կառուցապատման ընթացակարգերի պարզեցում և ժամկետների կրճատում | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն<br>ՀՀ քաղաքաշինության կոմիտե<br>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) | 30. 07.2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 3) | Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ նախագծի՝ ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում | կառուցապատման պարզ և հստակ ընթացակարգի սահմանում, էլեկտրոնային e-permits գործիքի կիրառման շրջանակների ընդլայնում, առկա խնդիրների կանոնակարգում | ՀՀ քաղաքաշինության կոմիտե<br>ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)<br>ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ) | 30. 07.2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4) | Շինարարության թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային e-permits համակարգի արդիականացում և ինտեգրում՝ մատակարար կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման ու կառուցապատման ընթացակարգերին մասնակից այլ մարմինների ներքին էլեկտրոնային համակարգերի հետ | կառուցապատման ընթացակարգերին մասնակից բոլոր մարմինների և կազմակերպությունների հետ ինտեգրված միասնական էլեկտրոնային e-permits համակարգ, որը կծառայի որպես էլեկտրոնային միասնական հարթակ | ՀՀ քաղաքաշինության կոմիտե<br>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) | 30.12.2019 թ. | 30 000.0 հազ. դրամ (մատակարար կազմակերպություններ) |
| 5) | «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին», «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» և «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները հաստատելու մասին» ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումներում համապատասխան փոփոխությունների կատարում | «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման», «Բնական գազի մատակարարման և օգտագործման» և «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման» կանոնները հաստատելու մասին» ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումների համապատասխանեցում ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման դրույթներին | ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ) | 2-րդ բաժնի 2-րդ ենթակետով նախատեսված որոշման ընդունումից հետո՝ 6- շաբաթյա ժամկետում | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 6) | Սահմանել մեխանիզմ, ըստ որի ավարտական ակտը հաստատվելուց հետո անմիջապես ՏԻՄ-ի կողմից այն ներկայացվի ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե սեփականության գրանցման համար՝ առանց կառուցապատողի կողմից վերջինիս դիմելու | շինարարական թույլտվության տրամադրման գործընթացում անհրաժեշտ քայլերի կրճատում | ՀՀ քաղաքաշինության կոմիտե<br>ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե<br>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) | 30.09.2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7) | Համայնքներում կառուցապատման նախագծերի համապատասխանությունն ուսումնասիրելու նպատակով ներգրավված ինժեներների (ճարտարապետների) համար պարտադիր նվազագույն պահանջների ներդրման հարցի դիտարկում | շինարարական աշխատանքների որակի բարելավում | ՀՀ քաղաքաշինության կոմիտե<br>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) | 30.06.2019թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 8) | GIS համակարգի ներդնում՝ ապահովելով մատակարարների և համաձայնություն պահանջող այլ կազմակերպությունների ու պետական մարմինների հասանելիությունն այդ համակարգին | ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման գործընթացում անհրաժեշտ քայլերի ու ժամկետի կրճատում և վարչարարության նվազեցում | ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե<br>ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտե<br>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) | ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի հնգամյա ծրագրով նախատեսված ինտեգրված (միասնական) կադաստրի ստեղծման միջոցառման ժամանակացույցին համապատասխան | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 9) | Ցածր ռիսկայինության օբյեկտների կառուցապատման համար պահանջվող ընթացակարգերի և պահանջների պարզեցում | կառուցապատման համար պահանջվող թույլտվական ընթացակարգերի ժամկետների և քայլերի կրճատում | ՀՀ քաղաքաշինության կոմիտե<br>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) | 30.06.2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **3. Էլեկտրաէներգիայի մատակարարման ցանցին միացում** | | | | | |
| 1) | Միացման ժամկետների կրճատում 5 օրով | մատուցված ծառայություն-ների որակի բարելավում | ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)<br>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br>«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (համաձայնությամբ) | 15.06. 2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 2) | Միացման քայլերի և ժամկետների մասին շնորհան-դեսի իրականացում՝ շահառուներին իրազեկելու նպատակով | շահառուների իրազեկում՝ միացման քայլերի (մինչև 2) և ժամկետների կրճատման մասին | «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (համաձայնությամբ) | Մինչև 15. 06. 2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| **4. Սեփականության գրանցում** | | | | | |
| 1) | Նոտարական վավերացում չպահանջող անշարժ գույքին առնչվող պայմանագրերի օրինակելի ձևերի ընդլայնում, ինչպես նաև ներկայացվող որոշ պարտա-դիր պայմանների (ֆիզիկական անձ հանդիսացող կողմը չի կարող հանդես գալ լիազորագրի հիման վրա) վերացում | հնարավորություն ընձեռնել ավելի լայն զանգվածին օգտվելու նոտարական վավերացում չպահանջող պայմանագրերի կնքումից | ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե | 30.11.2019թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 2) | ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կայքէջի միջո-ցով առցանց տրամադրվող տեղեկությունների տեսակ-ների ընդլայնում (պայմանագրային գներ), նոր տեղե-կատվական փաթեթների մշակում և այդ տեղեկու-թյունների համար նախատեսված վճարների մոտ երկու անգամ նվազեցում | հնարավորություն ընձեռնել առանց կադաստր վարող մար-մին անձամբ այցելելու ստանալ հայցվող տեղեկատվությունն անմիջապես (ինտերնետ միջա-վայրում) և ավելի մատչելի գնով | ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե | 30.11.2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3) | Կնիքի պահանջի վերացում՝ անշարժ գույքի կադաստրի մարմնի կողմից կազմված ավարտական փաստաթղթի արտաքին ձևի՝ թղթի վրա տրամադրման համար | Արդյունքում կադաստրի մարմնի կողմից կազմված ավարտական գրեթե բոլոր փաստաթղթերը (վկայական, միասնական տեղեկանք, այլ տեղեկանքներ և այլն) սուբյեկտները և այդ փաստաթղթերը պահանջող մարմինները կարող են տեսնել և արտահանել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կայքէջից, ու դիմումատուները ստիպված չեն լինելու ավարտական փաստաթուղթն ստանալու համար այցելել կադաստր վարող մարմին: | ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե | 30.11.2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 4) | Անշարժ գույքի գործարքների պարտադիր նոտարական վավերացման անհրաժեշտության բացակայության, ինչպես նաև անշարժ գույքին առնչվող գործարքների տեսակների և նոտարական վավերացում չպահանջող պայմանագրերի օրինակելի ձևերի վերաբերյալ քարոզարշավի շարունակում՝ ներկայացնելով դրանց առավելությունները | գործող կարգավորումների առավելություններից օգտվելու նպատակով շահառուների շրջանակում իրազեկվածության բարձրացում | ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե | սույն հավելվածի հաստատման պահին հաջորդող 10-րդ օրվանից սկսած շարունակական | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 5) | Բողոքարկման մեխանիզմի կատարելագործում՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեում առաջացած խնդիրները քննելու համար | սեփականության իրավունքների գրանցման ռեեստրի տեղեկությունների թափանցիկության ապահովում | ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե | 20.06.2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6) | Սեփականության գրանցման գործընթացում նոտա-րական վավերացում չպահանջող գործարքների հա-մար ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից տրվող միասնական տեղեկանքի տրամադրման պա-հանջի վերացման ուղղությամբ աշխատանքների մեկնարկ | սեփականության իրավունք-ների գրանցման ժամկետի կրճատում՝ գործարքը նույն պահին կատարելու համար | ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե | 30.11.2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| **5. Վարկերի ստացում** | | | | | |
| 1) | Ապահովված իրավունքի իրավական կիրառության ապահովում գույքի օգտագործման արդյունքում ստացված պտուղների, արտադրանքի և եկամուտների նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով | ապահովված պարտատե-րերի իրավունքների պաշտ-պանության արդյունավետու-թյան բարձրացում | ՀՀ արդարադատության նախարարություն | 20.06.2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 2) | «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի «Վարկերի ստացում» ցուցչի «Օրինական իրավունքների ամրու-թյունը» ենթացուցչի՝ ըստ ցանկի՝ 11-րդ հարցին «այո» պատասխանի ապահովմանն ուղղված իրավական ակտի նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ | ապահովված պարտատիրոջ շահերի պաշտպանություն | ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) | 20.06.2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 3) | Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում (այսուհետ՝ քաղաքացիական օրենսգիրք) նախատեսել դրույթ՝ հնարավորություն տալով գրավի պայմանագրով սահմանելու գրավի առարկայի, այդ թվում՝ առարկաների խմբի ընդհանուր նկարագրու-թյուն՝ անկախ որևէ չափանիշների | վարկերի ստացման ոլորտի օրենսդրության կատարելա-գործում | ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) | 20.06.2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 4) | Քաղաքացիական օրենսգրքում և «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մա-սին» Հայաստանի Հանրապետության օրենքում նախատե-սել դրույթներ, որոնք հնարավորություն կտան գրանցել նաև սեփականության իրավունքի պահպանմամբ կնքվող գործարքից բխող իրավունքները | վարկերի ստացման ոլորտի օրենսդրության կատարելագործում | ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) | 20.06.2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5) | Գրավի առարկայի գրանցման ժամանակ ռեեստր ներբեռնելու համար պարտապանի կողմից տրվող համաձայնության պարտադիր պահանջի վերացում | վարկերի ստացման ոլորտի օրենսդրության կատարելագործում | ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) | 20.06.2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| **6. Փոքր բաժնետերերի պաշտպանություն** | | | | | |
| 1) | Կորպորատիվ կառավարման կանոնակարգի կիրառման դաշտի ընդլայնում՝ գերիշխող դիրք ունեցող ընկերություններում կորպորատիվ կառավարման կանոնակարգի ներդրման մեխանիզմների մշակում | կորպորատիվ կառավարման մեխանիզմների կատարելագործում, կորպորատիվ հաշվետվողականության միջազգայնորեն ընդունված ստանդարտների կիրառում և աշխատողների բաժնետիրացում | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն | 30.11.2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 2) | Squeeze-out մեխանիզմի ուսումնասիրություն և անհրաժեշտության դեպքում այն կարգավորող համապատասխան իրավական ակտերի նախագծերի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ | տեղաբաշխված բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) միջոցով փոքր բաժնետերերին՝ ընկերությունից դուրս մղելու (ամբողջությամբ բաժնետոմսերից զրկելու) հնարավորության սահմանափակում | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն<br>ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) | 30.10.2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| **7. Հարկերի վճարում** | | | | | |
| 1) | Հարկային մարմին ներկայացվող հաշվետվությունների և տեղեկությունների թվի կրճատում | հարկային մարմին ներկայացվող հաշվետվությունների և տեղեկությունների վրա ծախսվող ժամանակի կրճատում | ՀՀ պետական եկամուտների կոմիտե | 30.11.2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2) | Հարկային հաշվարկների ինքնաշխատ լրացման (Pre-filing) համակարգի ընդլայնում | հարկային պարտավորությունների հաշվարկման ընթացակարգերի պարզեցում | ՀՀ պետական եկամուտների կոմիտե | 30.11.2019 թ.<br>. | ֆինանսական միջոցների առկայության դեպքում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3) | Միասնական հաշվին մուտքագրման ենթակա՝ յուրաքան-չյուր հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրու-թյամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարների միասնական հաշվին մուտքագրման ապահովում | ԱԱՀ-ի փոխհատուցվող գու-մարների միասնական հաշվին մուտքագրման ժամկետների կրճատում | ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ պետական եկամուտների կոմիտե | 30. 12.2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 4) | Միասնական հաշվին մուտքագրման ենթակա՝ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարների միասնական հաշվին մուտքագրման ժամկետների կրճատում | միասնական հաշվին մուտքա-գրման ենթակա՝ ԱԱՀ-ի փոխ-հատուցվող գումարների միաս-նական հաշվին մուտքագրման միջին տարեկան ժամկետների շարունակական կրճատում | ՀՀ պետական եկամուտների կոմիտե | 30.12.2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 5) | Ողղակի հարկերի գծով հարկային բեռի նվազեցում | 2020 թվականից շահութահարկի դրույքաչափի նվազեցում, օտարերկրյա ֆիզիկական անձանց շահաբաժինների հարկման դրույքաչափի նվա-զեցում, ինչպես նաև մինչև 2023 թվականը եկամտային հարկի դրույքաչափերի աստիճանա-կան նվազեցում | ՀՀ ֆինանսների նախարարություն | 01.09.2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| **8. Արտաքին առևտուր** | | | | | |
| 1) | Ապրանքների արտահանմանը և ներմուծմանն օրենս-դրությամբ սահմանված կարգով իրենց լիազորություն-ների շրջանակներում առնչվող՝ ՀՀ պետական գերա-տեսչությունների, միասնական հսկողության իրակա-նացման նպատակներով մաքսային ձևակերպումների և պետական սահմանային այլ հսկողության տեսակ-ների իրականացման ժամանակակից կենտրոն ստեղ-ծելու իրավական հիմքերի գույքագրում և ըստ անհրա-ժեշտության իրավական ակտերում փոփոխություն-ների (լրացումների) կատարում | նվազեցնել գործընթացների ծախսատարությունը և ժամանակատարությունը՝ բացառելով նաև հնարավոր կամայականությունները | ՀՀ պետական եկամուտների կոմիտե<br>շահագրգիռ պետական մարմիններ | 30.11.2019 թ. | ֆինանսական միջոց-ների առկայության դեպքում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2) | ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից առկա հսկո-ղական գործիքների համատեղ օգտագործում, այդ թվում՝ ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատու-հանի և ՍԷԿՏ համակարգերի ինտեգրում | սահմանահատման գործ-ընթացում ծախսվող ժամա-նակի կրճատում | ՀՀ պետական եկամուտների կոմիտե<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն | 30.11.2019 թ. | ֆինանսական միջոց-ների առկայության դեպքում |
| 3) | Մեծ ծավալի տվյալների (Big Data) ժամանակակից կառուցվածքով տվյալների շտեմարանների մշակման գործիքների ներդնում | առավել արդյունավետ ռիսկերի վերլուծությունների արդյունքում արդիական ռիսկի պրոֆիլների կիրառմամբ ավելի արդյունա-վետ թիրախավորված հսկողու-թյան իրականացում՝ նվազեց-նելով զննման դեպքերի քանակը | ՀՀ պետական եկամուտների կոմիտե | 30.11.2019 թ. | ֆինանսական միջոց-ների առկայության դեպքում |
| 4) | Ուսումնասիրել արտահանման և ներմուծման ժամանակ սննդամթերքի անվտանգության սերտիֆիկատի առկայու-թյան պարտադիր պահանջի վերացման հնարավորու-թյունը, և անհրաժեշտության պարագայում ներկայացնել առաջարկություն ՀՀ վարչապետի աշխատակազմ | արտահանման ընթացակարգի ժամանակատարության կրճատում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին | 30.06.2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 5) | Ապրանքների և տրանսպորտային միջոցների ինքնաշխատ բացթողման էլեկտրոնային համակարգի ներդրում (ավտոմատ բացթողում)՝ առանց մաքսային մարմինների գտնվելու վայրեր այցելության | մաքսային գործառնություն-ների իրականացման վրա ծախսվող ժամանակա-հատվածի կրճատում | ՀՀ պետական եկամուտների կոմիտե<br>շահագրգիռ պետական մարմիններ | 30.11.2019 թ. | ֆինանսական միջոցների առկայության դեպքում |
| 6) | Տեղեկատվության գաղտնի ստացման համար նախա-տեսված հատուկ տեխնիկական միջոցները երրորդ երկրներից ՀՀ մաքսային տարածք ներմուծելու և ՀՀ մաքսային տարածքից երրորդ երկրներ արտահանելու համար ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից լիցենզիայի տրամադրման համար պահանջվող ժամկետների կրճատում | լիցենզիայի ժամկետների կրճատում | ՀՀ ազգային անվտանգության ծառայություն | 20.06. 2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 7) | Ապրանքների արտահանման թույլտվություն ստանալու համար նախատեսված երկակի նշանակության և ռազմական նշանակության ապրանքների փորձագիտական եզրակացության տրամադրման գործընթացի պարզեցում | եզրակացության տրամա-դրման նպատակով վճարվող գումարի սահմանաչափի և տրամադրման ժամկետի նվազեցում | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն | 15.06.2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **9. Պայմանագրերի կիրարկում** | | | | | |
| 1) | Pro-bono իրավաբանական ծառայություններ մատուցող անձանց խրախուսման մեխանիզմների ներդնում | արդարադատության մատչելիության ապահովում | ՀՀ արդարադատության նախարարություն | 30.06. 2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 2) | Քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ պարզեցված վարույթի ինստիտուտի կատարելագործում | դատական գործերի քննության ժամկետների կրճատում, դատարանների ծանրաբեռնվածության նվազեցում | ՀՀ արդարադատության նախարարություն | 30.06. 2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 3) | Պարտապանին պատկանող գույքի հայտնաբերման, այդ թվում՝ պարտապանին պատկանող գույքի հայտաբարագրման, չգրանցված իրավունքների գրանցման, դատական ակտերի կամավոր կատարման խթանման գործիքակազմի ներդնում, կատարողական թերթին ներկայացվող պահանջների վերանայում | հարկադիր կատարման ժամկետների և վարույթի արդյունավետության ինդեքսի բարձրացում | ՀՀ արդարադատության նախարարություն | 30.06. 2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 4) | Դատական տեղեկատվական համակարգի կատարելագործում, այդ թվում՝ դատական գործերի վարման էլեկտրոնային համակարգի զարգացում | տեղեկատվության հասանելիություն, դատավարական փաստաթղթերի մատչելիություն, ժամանակային ծախսերի նվազեցում | ՀՀ արդարադատության նախարարություն | 30.09.2019 թ. | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 5) | Դատարանի կողմից էլեկտրոնային եղանակով դատավարական փաստաթղթեր առաքելու հնարավորության նախատեսում | արդարադատության մատչելիություն, ժամանակային ծախսերի նվազեցում | ՀՀ արդարադատության նախարարություն | 30.09.2019 թ. | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 6) | Առևտային վեճերի (հասկացությունը՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ կետ) դատական գործերի ժամանակատարության և ընթացակարգերի ուսումնասիրություն՝ ըստ փուլերի՝ գործերի քննության ուշացումների պատճառների հայտնաբերման նպատակով<br>Փուլերը տարանջատել ըստ գործարարությամբ զբաղվելը զեկույցի համապատասխան բաժնի հարցաշարի | դատական գործերի քննության ժամանակի կրճատում | ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ դատական դեպարտամենտ (համաձայնությամբ) | 30.09.2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7) | «Ֆինանսական համակարգում արբիտրաժային հաստատության մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերի մշակում | գործերի քննության ժամկետ-ների և ծախսերի կրճատում | ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) | 30.12.2019 թ. | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| **10. Սնանկության ճանաչում** | | | | | |
| 1) | Սնանկության վարույթի ընթացքում պարտապանի կողմից իր կենսունակության համար անհրաժեշտ պայմանագրերը շարունակելու և իր համար անբարենպաստ պայմանա-գրերի կատարումից հրաժարվելու հնարավորության նախատեսում | ֆինանսական առողջացման ծրագրի արդյունավետ իրա-գործում և տնտեսավարող սուբյեկտի բնականոն գործու-նեության վերականգնում | ՀՀ արդարադատության նախարարություն | 20.06.2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 2) | Սնանկության վարույթի ընթացքում կատարվող գործողու-թյունների համար հստակ ժամկետների սահմանում | սնանկության վարույթի արդյունավետության բարձրացում և ժամկետների կրճատում | ՀՀ արդարադատության նախարարություն | 20.06.2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 3) | Սնանկության վարույթի ընթացքում պարտապանի կողմից վարկեր ստանալու հնարավորության նախատեսում | ֆինանսական առողջացման արդյունավետ իրականացում, ինչպես նաև ստանձնած պարտա-վորությունների իրականացում | ՀՀ արդարադատության նախարարություն | 20.06.2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 4) | Պարտատերերի կողմից կառավարչից ֆինանսական տեղեկություններ պահանջելու հնարավորության սահմա-նում և համապատասխան իրավական ակտի նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ | սնանկության վարույթի արդյունավետության բարձրացում | ՀՀ արդարադատության նախարարություն | 20.06.2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 5) | Սնանկության կառավարչի ընտրության հարցում պարտա-տերերի ներգրավվածության բարձրացման նոր եղանակ-ներ նախատեսող համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ | սնանկության վարույթի արդյու-նավետության բարձրացում | ՀՀ արդարադատության նախարարություն | 20.06.2019 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ